

Սուսաննա Սերոբյան

ՍՈՒՄՉԱՅԻԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՈՒՄ 1988 Թ. ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ ԱՄԻՄՆԵՐԻՆ (քննական վերլուծություն)

Բանալի բառեր. Արցախ, հիմնախնդիր, արդարություն, Սումգայիթ, ցեղասպանություն, մամուլ, կեղծիք, խեղաթյուրում, ապակողմնորոշում, պայքար:

1988 թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթում սանձազերծվեց հայության սպանող, որը ցնցեց քաղաքակիրթ հանրությանը: Արցախյան հիմնահարցում խորհրդային կուսակցական-պետական դիրքորոշումը, ՋԼՄ-ներում հայ-ադրբեջանական հարաբերությունների վերաբերյալ օպերատիվ ու անկողմնակալ տեղեկատվության մշտական բացակայությունը, իրողությունների անտեսումը կամ միտումնավոր խեղաթյուրումը խրախուսեցին ադրբեջանական իշխանություններին ծրագրելու և իրականացնելու ցեղասպանության գործողություններ Սումգայիթում, որոնց նպատակն էր ահաբեկման ճանապարհով ստիպել հայությանը ետ կանգնել Արցախը մայր հայրենիքին վերամիավորելու արդարացի պահանջից:

ԽՍՀՄ-ում հռչակված հրապարակայնության պայմաններում հարկ էր հրապարակավ դատապարտել տմարդի գործողությունը, հանրային և տեղեկատվության միջև ապահովել անմիջական և ուղղակի կապ՝ համապարփակ լուսաբանելով տեղի ունեցած իրադարձությունները և տալով դրանց անկողմնակալ և առարկայական գնահատական: Սակայն «վերակառուցման լուսարձակ» խորհրդային մամուլն, ի սկզբանե միտումնավոր կեղծելով Արցախյան հիմնախնդրի էությունը, խայտառակ ու ամոթալի խեղաթյուրման մատնեց սումգայիթյան դառը ճշմարտությունը վերհանող փաստերը:

1988 թ. ապրիլին ԼՂ շուրջ պաշտոնական հաղորդագրություններին հետևեցին լրագրողական հրապարակումները: Անշուշտ, ազգամիջյան հարաբերությունների նուրբ ոլորտը պահանջում էր ճգնաժամային իրավիճակում դրսևորել քաղաքական բարձր մշակույթ և կատարել իրադարձությունների առարկայական արժևորում ու մանրակրկիտ վերլուծություն: Մինչդեռ, ինչպես իրավամբ նշում էր Սոցիալիստական աշխատանքի հերոս Գ. Մարգարյանը, «լուրերն ավելի շատ էին, քան օբյեկտիվ տեղեկատվությունը»¹:

Ապրիլին կենտրոնական մամուլում որոշ վերապահումներով խոստովանություն արվեց, որ ազգամիջյան հարաբերությունների ոլորտում եղել են բացթողումներ և թույլ են տրվել դրանց լուսաբանման հետ կապված լուրջ սխալներ, որոնք շուտափույթ պետք է շտկել, որ մամուլը պետք է իր ծանրակշիռ խոսքն ասի և ներդրումն ունենա ԼՂ հիմնահարցի կարգավորման մեջ: Հենց այս միտումով էլ կենտրոնական և հանրապետական թերթերը իրենց էջերը սկսեցին տրամադրել վերլուծական նյութերին, որոնցում հնչում էին հանգստություն պահպանելու և իմաստություն ու սթափություն դրսևորելու կոչերը այն հիմնավորումով, որ բազմազգ երկրում հանրային մթնոլորտը որքան առողջանա և ժողովուրդների բարեկամությունը հաստատ ու ամուր լինի, այնքան արտասահմանյան մամուլը քիչ հնարավորություն կունենա՝ հակախորհրդային քարոզչություն ծավալելու և խորհրդային երկրի հաշվին դիվիդենտներ շահելու: Մանավանդ, որ արտասահմանյան ՋԼՄ-ները, որոնք ի սկզբանե իրենց ուշադրությունն էին բեռնել ԼՂԽՄ-ի շուրջ իրադարձություններին, ինչպես նշում էր լրագրող Յու. Բանդուրան, «փորձում էին օգտագործել Ղարաբաղյան հիմնահարցը՝ խորհրդային պետությունը խարխլելու, ապա՝ անդամահատելու նպատակով»²: Իրականում արևմտյան մամուլում մեծամասամբ հնչում էր հետևյալ միտքը. «ԼՂ հիմնախնդրի լուծումը պետք է նախադեպ դառնա

¹ Տե՛ս «Труд», «Наши общие интересы,откровенно, по рабочему», 03.04.1988.

² Տե՛ս «Московские новости», «НК недобрый взгляд со стороны», 03.04.1988.

ԽՍՀՄ բոլոր մյուս ազգությունների համար, որոնք զգացել են, թե ինչ է պետական սահմանների վերաձևումը», «ոչ ռուսական հանրապետությունները չպետք է հանգստանան՝ մինչև ինքնորոշման լիակատար իրավունքի ձեռքբերումը»¹:

Անդրադառնալով փետրվար - մարտյան օրերին կենտրոնական մամուլում Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ հրապարակումներին՝ «Մոսկովսկիե նովոստին» ապրիլին արձանագրեց, որ ԼՂ և նրա շուրջ իրադարձությունները մամուլում ներկայացվել են ծուռ հայելու մեջ, քանի որ «կենտրոնական մամուլն ընթերցելով կարելի է սխալ եզրակացություն անել, թե փետրվարյան վերջին օրերը եղել են ամենահանգիստը»: «...Մինչդեռ հազարավոր մարդիկ պաշտպանություն ու փրկություն էին փնտրում քաղաք մտած զինվորներից», մինչդեռ «...Սումգայիթում զանգվածային անկարգություններն ուղեկցվել են թալանով, հրդեհներով, հանրորեն խիստ վտանգավոր գործողություններով», և «...միջոցներ են ձեռնարկվում՝ բոլոր հանցագործությունները բացահայտելու և հանցագործներին ու հանցակիցներին պատժելու համար»²: Հողվածում մեջբերվում էր ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Ալեքսանդր Կատուսևի այն միտքը, որ Սումգայիթը երկրի բազմազգ քաղաքներից է, բայց բազմազգության փաստը ինքնին դեռ ինտերնացիոնալիզմի վկայություն չէ, և իրավամբ նշվում էր, որ բոլոր օղակներում խոսվում է «հիմնախնդրի նյութական կողմի մասին», մինչդեռ «ցուցարարները ավելի շատ կարևորում են հոգևոր գործոնը՝ առավել լայն կապերի հաստատումը (և ոչ թե վերամիավորումը –Ս.Ս) Հայաստանի հետ»³:

Հարկ է նշել, որ Արցախյան շարժման նոր փուլի սկզբնավորումից խորհրդային հանրության առողջ, առաջադիմական ուժերը բարոյապես սատար կանգնեցին համաժողովրդական շարժմանը և իրենց ելույթներում դատապարտեցին սումգայիթյան սպանդը: Մամուլում բողոքի իր ձայնը բարձրացրեց նաև ակադեմիկոս Ա. Սախարովը, ով 1988 թ. մարտի 21-ին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին ուղղված իր նամակում շարադրեց իր տեսակետը՝ թաթարներին Ղրիմ վերադարձնելու և ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու մասին: Նա հանդես եկավ երկրի յուրաքանչյուր ժողովրդի արդար պահանջների ու շահերի պաշտպանությամբ՝ իրավամբ նշելով, որ «մարտի 24-ի (ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ մինիստրների խորհրդի-Ս.Ս.) որոշման մեջ չկա հստակ վերաբերմունք ԼՂԻՄ մարզխորհրդի /փետրվարի 20-ի – Ս.Ս./որոշման նկատմամբ» և կոչ արեց բացառել բռնությունը, քանի որ «մեծագույն հանցագործություն կլինի, եթե հրեշավոր հանցագործությունների պատասխանը դառնան նոր հանցագործությունները»⁴:

Հատկանշական էր նաև կենտրոնական հեռուստատեսությամբ Հ. Բորովիկի «Դիրքորոշում» հաղորդմանը մամուլի արձագանքը⁵: Հողվածի հեղինակ Ս. Բարուզդինը նշում էր, որ հաղորդման կարևորությունն անվիճելի է, քանի որ ԼՂԻՄ հիմնախնդրի համատեքստում Հ. Բորովիկի կողմից լուրջ խոսակցություն ծավալվեց և բարձրաձայնվեց, որ Սումգայիթում եղել է ողբերգություն: Մինչդեռ ՋԼՄ – ներում այնքան հակասական, անտրամաբանական, երբեմն խեղաթյուրված էին լուսաբանվում իրադարձությունները, որ «ակամայից օգտվում էինք ամեն տեսակի լուրերից, «ականատեսների» վկայություններից»⁶: Հողվածում իրավամբ նշվում էր, որ Սումգայիթում սոցիալական խնդիրները կամ ընդհանրապես անտեսվել են, կամ լուծվել դանդաղորեն: Հեղինակը կատարում էր հռետորական հարցադրում. ինչու՞ են անգամ հրապարակայնության շրջանում ձևավորվում լռության գոտիներ, երբ վերջիվերջո հարկ է լինում ասել ճշմարտությունը: Նա կարևորում էր ազգամիջյան հարաբերությունների մշակույթի կատարելագործումը և ընթերցողի ուշադրությունն էր բևեռում հաղորդման գլխավոր դասին. «նման տխուր իրադարձություններից մենք դեռ դանդաղ ենք անհրաժեշտ ճիշտ

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս «Московские новости», «События в зеркале прессы. Тревожные недели. СМИ о событиях в НК и вокруг него», 03.04.1988.

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, «За спокойствие и мудрость».

⁵ Տե՛ս «Литературная газета», «Позиция о событиях в НК», 04.04.1988.

⁶ Տե՛ս նույն տեղում:

եզրակացություններ անում»¹: Սակայն թե՛ Հ. Բորովիկը իր «Դիրքորոշում» հաղորդմամբ, թե՛ Ս. Բարուզդինը հաղորդմանն իր արծագանքով, այնուամենայնիվ, հստակ քաղաքական գնահատական չտվեցին սուուագայիթյան ջարդերին և չպաշտպանեցին Արցախը Հայաստանին վերամիավորելու գաղափարը: Չենք ժխտում, որ Հ. Բորովիկը ինչ - ինչ չափով փորձ կատարեց՝ խոսք ասելու Արցախյան հիմնախնդրի մասին, սակայն, մեր կարծիքով, այդ հաղորդումը ևս հանրային հանգստացնելու, «բալանսը» պահելու՝ իշխանությունների կողմից արված յուրօրինակ քայլ էր: Հակառակ դեպքում ինչու՞ Արցախյան հիմնախնդիրը չորակվեց որպես ԽՍՀՄ ազգային ոչ ճիշտ քաղաքականության հետևանք ու դրսևորում, ինչու՞ չբարձրաձայնվեց այն հարցերի պատասխանը, թե հնարավոր էր արդյոք ինտերնացիոնալիզմի լեւինյան սկզբունքների հիման վրա կարգավորել հիմնախնդիրը, ճիշտ էր արդյոք Արցախի հետագա գոյությունը Ադրբեյջանի կազմում կամ ինչու՞ 1988 թ. մարտի 28-ին Խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի նախագահ Հ. Բորովիկը, ելույթ ունենալով հայ մտավորականության առջև, հայտարարեց. «ԼՂԻՄ միավորումը Հայաստանին կնշանակի հավերժ Սուուագայիթ»²: Անդրադառնալով լրագրող Ս. Բարուզդինի արծագանքին՝ հարկ ենք համարում չհամաձայնել նրա այն տեսակետին, թե հաղորդման ժամանակ նկարահանված հայ միլիցիոները վախեցել էր կինոխցիկից և խուսափել պատասխանել այն հարցին, թե ինչպե՞ս է վերաբերվում հանրային մայրաքաղաքում տեղակայված խորհրդային զինվորներին³:

«Լեւնային Ղարաբաղի շուրջ» խորագրով տպագրվեց լրագրող Լ. Ելինի հարցազրույցը ԽՍՀՄ ԳԱ Պետության և իրավունքի ինստիտուտի աշխատակիցներ իրավագիտության դոկտոր Բ. Լազարևի և իրավագիտության թեկնածու Ի. Մուկսինովի հետ Արցախյան հիմնախնդրի իրավական կողմի և մյուս առանձնահատկությունների վերաբերյալ⁴: Հոդվածում իբրև ԼՂ իրավիճակի յուրահատկություն էր ընկալվում Հայաստանի հետ ԼՂ ուղղակիորեն սահման չունենալը և վերջինիս «պատմականորեն ամուր ընդգրկվածությունը Ադրբեյջանի տնտեսական համակարգում»: Լ. Ելինը գտնում էր, որ ԼՂ իրադարձությունները ծավալվել էին ծայրահեղական ձևերով : Նա մեջբերում էր Բ. Լազարևի այն միտքը, թե «չի կարելի հրապարակայնությունն օգտագործել վերակառուցման դեմ»: Հոդվածում իբրև հիմնախնդրի լուծման ուղի առաջարկվում էր կենտրոնական գերատեսչությունների մի շարք հրահանգների լուծարումը, ԼՂ ինքնավարության ընդլայնումը և խորհրդային ֆեդերալիզմի կատարելագործումը⁵:

Նկատենք, որ այս հոդվածը իր ձեռագրով և բովանդակությամբ չէր տարբերվում նախորդներից այն իմաստով, որ արցախյան հիմնախնդիրը կրկին «լուսաբանվում էր» իբրև սոցիալ – տնտեսական խնդիր, կրկին լռության էր մատնվում սուուագայիթյան ողբերգությունը, կրկին «հիմնավորվում էր» ԽՍՀՄ սահմանադրության 78-րդ հոդվածը և պաշտպանություն գտնում Ադրբեյջանի տարածքային ամբողջությունը՝ զանց անելով ԽՍՀՄ սահմանադրության 70-րդ հոդվածով ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման համար արցախահայության և պատմական արդարության վերականգնման համար ողջ հայության պահանջը: Մենք կարևորեցինք այս հոդվածին անդրադարձը, թերևս, Ի. Մուկսինովի՝ բացարձակ ճշմարտություն հանդիսացող մեկ մտքի հետ կապված, այն է՝ հիմնախնդիրները չբարձրաձայնելը երբեք էլ չի նշանակում, որ դրանք գոյություն չունեն: Ցավոք, հենց հարցազրույցի մասնակիցները չկարևորեցին իրենց այդ միտքը:

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս «Адреса тревоги.Сумгаит».

³ Մեր կարծիքով, լինելով ծառայության մեջ, նա պարզապես իրավասու չէր պատասխանելու հարցերին: Ճակատագրով ինձ բախտ վիճակվեց ճանաչելու այդ հրաշալի մարդուն՝ միլիցիոներ Սերգեյ Սիմոնյանին, որը հետագայում ՄՕՀՁ-ի շարքերում անդամագրվեց Արցախյան ազատամարտին՝ իր ներդրումն ունենալով ու հերոսանալով, և ներկայումս նրա անունով է անվանակոչվել Երևանի Հ.Պարոնյանի անվան դպրոցի ռազմագիտության դասարանը, ուր կրթվում ու քաջության և հայրենասիրության դաս է առնում նոր սերունդը:

⁴ Տե՛ս «Новое время», «Вокруг Нагорного Карабаха. Закон о границах и границы закона», 01.04.1988.

⁵ Տե՛ս նույն տեղում:

1988 թ. ապրիլին խորհրդային Հայաստանում և ԼՂԻՍ-ում իրավիճակը հարաբերականորեն հանդարտվել և վերականգնվել էր նորմալ աշխատանքային ռիթմը, երբ «Ճշմարտության մունետիկ» «Պրավդան» սանձազերծեց նոր սադրանքը՝ Ա. Վասիլկովի և Գ. Օվչարենկոյի հեղինակած «Սադրիչներ» հոդվածը, որը հանրույթի շրջանում առաջ բերեց օրինական գայրույթի ու վրդովմունքի ալիք¹: Հեղինակները գտնում էին, որ նախորդ՝ «Ջգացմունքներ և բանականություն» հոդվածում, ճիշտ են գնահատվել ԼՂԻՍ և նրա շուրջ իրադարձությունները, և լուտանք էին թափում Սումգայիթի մասին «սադրիչ Արևմուտքին» ապատեղեկատվություն տվող «հանցագործներ» Պ. Հայրիկյանի, Ս. Գրիգորյանի և նրանց համախոհների գլխին: Ս. Գրիգորյանի մամլո ասուլիսը սումգայիթյան սպանդի գոհերի թվի մասին՝ կազմակերպված փետրվար ամսին իր տան մոտ, որակում էին որպես բացարձակ սուտ՝ ծայրահեղականություն, ազգային թշնամանք ու ճգնաժամային իրավիճակ ծնող: Հոդվածագրերը, սադրիչ անվանելով նաև Ի. Մուրադյանին, գտնում էին, որ հայ ժողովրդին ուղղված վերջինիս կոչը՝ չկարդալու կենտրոնական թերթերը և չդիտելու կենտրոնական հեռուստատեսության հաղորդումները, իրականում վախկոտություն է՝ կապված այն բանի հետ, որ «վաղ թե ուշ ԶԼՄ – ները կբացահայտեն Ի. Մուրադյանի ոչ թե լոզունգային, այլ իրական նպատակները»²: Գ. Օվչարենկոյի կարծիքով հենց ներքին ու արտաքին սադրիչները ժողովրդավարության ու արդարության քողի ներքո փորձում էին այլասերել վերակառուցման գործընթացը և երկրում սրել սոցիալական ու ազգամիջյան հակամարտությունները: Հոդվածի վերջում նշվում էր, որ պատմության դասերը սովորեցնում են, որ սոցիալիզմի հիմքերի նկատմամբ ցանկացած ոտնձգություն դատապարտված է ձախողման:

Նախ նկատենք, որ հոդվածում բացակայում էր առարկայական տեղեկատվությունը սումգայիթյան սպանդի և առհասարակ ԼՂԻՍ-ի շուրջ իրադարձությունների վերաբերյալ, և ակնհայտ դրսևորվում էր լոզունգայնություն ու ամբոխավարություն: Երկրորդ, հոդվածում հերթական անգամ ոչ միայն նվաստացվում էր համաժողովրդական շարժումը, այլև անարգվում սումգայիթյան ջարդերի անմեղ գոհերի հիշատակը, երբ կասկածի տակ էր դրվում կամ անտեսվում վերջիններիս իրական թիվը: Այդ նույն միտումները ակնհայտ էին նաև ադրբեջանական մամուլի հրապարակումներում³: «Իզվեստիա» թերթի հատուկ թղթակից Պ. Գուտիոնտովն արձանագրում էր, որ չնայած իրավիճակը ԼՂ-ում բարելավվել է և կարծես թե դուրս է գալիս «պատային լինելուց», այնուամենայնիվ դրա հետագա բարելավման «արգելապատնեշ» են «Բակինսկի ռաբոչի» թերթի մարտի 26-ի համարում լրագրող Լ. Պոլոնսկու «Տարերայնորեն, թե՞ կազմակերպված» և ապրիլի 2-ի՝ բանաստեղծ Ֆ. Մեխտիի և Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Խ. Մամեդովի «Տազնապի գարուն» հոդվածները, որոնցում միակողմանիորեն, ավելին՝ խեղաթյուրված են ներկայացված իրադարձությունները: Նա նշում էր, որ չնայած անհարմար է գործընկերների աշխատանքը քննարկելը, սակայն ինքը չի կարող արդարացի չհամարել Մարտունու շրջանի Գիշինի միջնակարգ դպրոցի տնօրեն Վ. Անտոնյանի և աշխատանքի վետերան Ս. Պետրոսյանի վրդովմունքը՝ կապված այն բանի հետ, որ մամուլում վերջիններիս անունից հրապարակվել էին նյութեր, որոնցից վերոհիշյալ անձինք վաղօրոք կտրականապես հրաժարվել էին⁴: Չնայած, որ Լ. Պոլոնսկու վերոնշյալ հոդվածը խստորեն ու միաձայն դատապարտվեց Ստեփանակերտի քաղկոմի պլենումում, չուշացավ ադրբեջանական մամուլի հերթական սադրանքը⁵: Հոդվածը բովանդակում էր Սումգայիթի ժողովրդական դատարանի նախագահ Սահիբ Մամեդովի հետ հայ թղթակից Ս. Մարտիրոսյանի (ադրբեջանական «օբյեկտիվության» դրսևորում-Ս.Ս.) հարցազրույցը Սումգայիթի դեպքերի հետաքննության շուրջ: Նշվում էր, որ «ժողովուրդը ճիշտ է գնահատել իշխանության կողմից ձեռնարկված միջոցները», որ մանր խուլիգանության համար դատարանի առաջ են կանգնել 444 մարդ, որ

¹ Տե՛ս «Правда», «Подстрекатели, еще раз о событиях в НК и вокруг него», 04.04.1988.

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս «Известия», «Степанакерт, 5-ое апреля», 06.04.1988., но.97.

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս «Коммунист Сумгаита», «Следствие по делу / по следам событий/», 06.04.1988.

«դաժան պատիժների մասին լուրերը սուտ են», որ 4 անձ (ա. էպշտեյն, ն. նաջաֆոլ, ա. ալեքսեյով, վ. մամեդով¹) սառը զենք կրելու համար կարժանանան առավել խիստ պատժի՝ մինչև 2 տարի ազատազրկման: Հողվածագրի կողմից վերջում արվում էին հարցադրումներ՝ ինչու՞ երիտասարդությունը հեշտորեն և անմտորեն գնաց ամբոխի հետ, ինչու՞ բազմաթիվ գրանցում չունեցող ծրիակերներ կային քաղաքում, ինչու՞ էր կարելի ազատորեն դանակ պատրաստել գործարանում: Վերջում ընթերցողն «իրազեկվում էր», որ ծանր հանցագործությունները կհետաքննվեն ապրիլի երկրորդ կեսին²:

Անգամ սովորական ընթերցողի համար պարզից էլ պարզ են դառնում այս հոդվածի նպատակները. առաջին՝ պատրանք ստեղծել, թե ադրբեջանական մամուլն առարկայորեն լուսաբանում է սոււմգայիթյան իրողությունները և դրանով իսկ լրացնել այն բացարձակ լռությունը, որը դրսևորել էին սոււմգայիթյան թերթերը ողբերգությունից հետո, երկրորդ՝ ամեն կերպ հերքել, որ արյունոտ մղձավանջը կրել է կազմակերպված բնույթ, երրորդ՝ հոդվածի ներքո հայ լրագրողի անունը տպագրելով՝ ընթերցողին հավաստիացնել, որ չնայած ողբերգությանը, Սոււմգայիթը շարունակում է մնալ «ինտերնացիոնալ բարեկամության քաղաք» :

Սոււմգայիթյան իրողությունների լուսաբանման տեսանկյունից 1988 թ. ապրիլին խորհրդային մամուլի հրապարակումներից իրենց տեղեկատվությամբ քիչ թե շատ առանձնացան «Իզվեստիայի» թղթակիցներ Ս. Դարդիկինի և Ռ. Էմինբեյլու համահեղինակած, ինչպես նաև «Մոսկովսկիե նովոստիում» Վ. Լոշակի հոդվածները, որոնց տողերի արանքում (ինչպես ընդունված էր խորհրդային գրաքննության շրջանում –Ս.Ս.), ընթերցողը կարողանում էր գտնել մանրամասներ ողբերգության մասին³: Առաջին հոդվածում արձանագրվում էր տխուր իրականությունը. Սոււմգայիթի քաղաքով անցնող նախագահ Ռ.Էմինբեյլին պատմում էր, որ ականատես է եղել, թե ինչպես ադրբեջանցի և հայ տարեց հարևանները դեմառդեմ նստած արտասվում և միաձայն անիծում էին ինչ –որ երրորդի՝ քաղաքային ՆԳԲ պետի պաշտոնակատար խ. ջաֆարովին, ում ցուցումով վաղօրոք ճշտվել էին Սոււմգայիթում հայերի հասցեները: Այս տողերի արանքում ընթերցողին ակնհայտ էր դառնում, որ Սոււմգայիթում խուժանը գործել էր բարձրագույն օղակների հովանու ներքո՝ կտիաբար ու անպատիժ: Իսկ հոդվածում արձանագրված այն փաստերը, որ ողբերգությունից 2-3 օր առաջ ազերիներից ոմանք զգուշացրել էին հայերին, որ վերջիններիս դեմ ինչ –որ բան է նախապատրաստվում կամ, որ գազազած ամբոխից առանձնացել էին 15 հոգանոց ոհմակներ՝ վաղօրոք ճշտված համապատասխան բնակարանների վրա հարձակվելու նպատակով, խոսուն վկայություն էին դառնում այն բանի, որ Սոււմգայիթը վաղօրոք պատրաստված գործողություն էր:

Վ. Լոշակը հայտնում էր ողբերգության այլ մանրամասներ, որ փետրվարյան օրերին աշխատող շտապօգնության քսանից ավելի մեքենաներից քարկոծման հետևանքով ութը ենթակա են եղել դուրսգրման, 81 վիրավորից 16-ը դեռ շարունակում էին իրենց բուժումը Բաքվում: Հողվածագիրը հաստատում էր, որ «կոմերիտական փառքի քաղաքում» իշխանությունների կողմից երբեք էլ քայլ չի ձեռնարկվել առկա սոցիալական ծանր վիճակը, չարությունը, դժգոհությունը, փոփոխությունների հանդեպ անվստահությունը վերացնելու համար: Նա ընդգծում էր սոււմգայիթյան ջարդերի զանգվածային բնույթը, երբ գրում էր, որ փետրվարյան դեպքերի նախաքննությամբ զբաղվող հարյուրից ավելի արհեստավարժ քննիչներն ու փորձագետները, չնայած շատ զուսպ են իրենց գնահատականների մեջ, սակայն մինչ այդ նրանցից և ոչ մեկը չի բախվել նման զանգվածային հանցագործությունների հետ: Վ. Լոշակը իրատես էր և, չնայած հոդվածն ավարտում էր ջուլիակագործուհի Թ. Ավագյանի և խառատ Ի. Մամեդովի՝ ամուսնության դիմում ներկայացնելու մասին լուրով, սակայն հույս չէր փայփայում, որ

¹ Մենք միտումնավոր հարկ ենք համարել սոււմգայիթյան եղեռնագործների անուններն արձանագրել փոքրատառով -Ս.Ս. :

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս «Известия», «Сумгаит:заботы исполкома», 09.04.1988, но. 99 և «Московские новости», «Сумгаит, месяц спустя», 17.04.1988, но.16:

Սոււմգայիթից հետո արագորեն կվերանա հոգեբանական ճգնաժամային իրավիճակը և կհաստատվի «փոխհանդուրժողության մոմենտը»¹ :

Ինչպես նկատում ենք, վերոնշյալ հոդվածները պարունակում էին միայն որոշ տեղեկատվություն և դրանից բխող ենթատեքստ սոււմգայիթյան ողբերգության մասին, բայց ոչ երբեք նրա առարկայական վերլուծություն և հստակ գնահատականներ: Ինչպես իրավամբ գտնում էր ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության նախագահ Ա.Գելմանը, դրա և երկրում այլ հիմնախնդիրների պատճառը խորհրդային ՋԼՄ–ների ինքնուրույնության և անկախության, ինչպես նաև առհասարակ ժողովրդավարական արժեքների պակասն էր²: «Սոււմգայիթում արյուն է հեղվել, և դրա բոլոր մեղավորները մեկ առ մեկ պետք է փնտրվեն, գտնվեն ու անվանվեն»³, - գրում էր նշանավոր ռեժիսորն ու դրամատուրգը: Սակայն «իրապարակված նյութերում գրավոր խոսքի առանձին ձևակերպումները առաջ բերեցին մոսկվացիների դժգոհությունը, էլ չենք ասում Երևանի և Սոււմգայիթի ընթերցողների մասին», - նշում էր Ա. Գելմանը և առաջարկում Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը շտկելու նպատակով առավել մեծ ուշադրություն բևեռել ազգամիջյան հարաբերությունների ոլորտին՝ ստեղծելով ազգությունների գործերի նախարարություն կամ կոմիտե⁴:

Բնականաբար, կենտրոնական մամուլում սոււմգայիթյան իրադարձությունները լուսաբանող տեղեկատվությունը չէր բավարարում ընթերցողին: Այդ մասին էր նշում ԽՍՀՄ ՆԳՆ տեղեկատվության վարչության պետ Գ. Գերասիմովը. «Շատերը խիստ դժգոհ էին Անդրկովկասից եկած տեղեկատվության ծավալից»⁵: Բազմաթիվ նամակներ էին ուղղվում ԽՄԿԿ ԿԿ, կենտրոնական մամուլի և հեռուստատեսության հասցեին՝ սոււմգայիթյան ողբերգության սադրիչների ու իրագործողների, նրա պատճառների ու հետևանքների մասին համակողմանի տեղեկատվության, խնդրի շուրջ համաժողովրդական բաց քննարկում կազմակերպելու պահանջներով: Հարկ ենք համարում անդրադառնալ նման պահանջներով նամակ - դիմումներից մեկին. ԽՍՀՄ գիտահետազոտական հեղինակավոր տարբեր հիմնարկների 247 աշխատակցի ստորագրությամբ նամակ-դիմում հղվեց ԽՄԿԿ ԿԿ, «Իզվեստիա» թերթի և «Ժամանակ» տեղեկատվական հեռուստածրագրի խմբագրություններին, ուր խոր դժգոհություն էր հայտնվում առհասարակ ԼՂԻՄ-ի շուրջ իրադարձությունների մասին ՋԼՄ-ներում առկա տեղեկատվությունից: Նամակում արձանագրվում էր, որ արտասահմանյան լրատվամիջոցները ավելի մեծ ուշադրություն են բևեռում հիմնախնդրին, որ միայն անգլիական կոմունիստական «Մորնինգ սթար» թերթի մարտի 9-ի համարում (ուր նշվում էր նաև մարտի 8-ին Երևանում կանանց երթի մասին՝ կազմակերպված Սոււմգայիթի զոհերի հիշատակին-Ս.Ս.) ավելի մեծ տեղեկատվություն է առկա, քան երկրի ողջ կենտրոնական մամուլում: Ներքաղաքական խնդիրների վերաբերյալ խորհրդային լրատվությունը որակելով կծծի ու միակողմանի՝ մտավորականները մտահոգություն էին հայտնում հատկապես սոււմգայիթյան ողբերգության մասին ճշմարտությունը հանրությանը պարտակելու հետևանքների շուրջ՝ իրավամբ նշելով, որ «մամուլը ապատեղեկացնելով մեզ դարձնում է այդ հանցագործությունների հանցակիցը»: Գիտնականները սոււմգայիթյան դեպքերը անհարիր էին համարում խորհրդային երկրին և ինտերնացիոնալիզմի ոգուն և հետագա ողբերգությունները կանխելու նպատակով պահանջում էին վերջ տալ ՋԼՄ–ների լռությանն ու անտարբերությանը⁶:

Խորհրդային ընթերցողների բողոքի հետ կապված լրագրողներ Վ. Վոյտենկոն և Վ. Սոլովյովը «Երբ հանդարտվում են կրքերը» խորագրով հոդվածում արձանագրում էին, որ բազմազգ խորհրդային երկրում ազգամիջյան հարաբերություններում տեղի է ունեցել շեղում Լեւինյան սկզբունքներից, որ «...այո՛, Սոււմգայիթում եղել են և՛ դաժան

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս «Советская культура», «Время собирания сил», 09.04.1988, стр. 5.

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս «Аргументы и факты», но.14, 1988.

⁶ Տե՛ս ՀԱԱ,ֆ.1.ց.87, գ.19, ք.68-70:

սպանություններ, և՛ սպանվածների դիերի անարգանք: Եղել են բռնաբարության դեպքեր, տասնյակ վիրավորներ...», բայց խորհրդային մամուլի ավանդույթներին անհարիր է բռնությունների ու ջարդերի սահմնկեցուցիչ մանրամասները ներկայացնելը և կրքեր բորբոքելը¹: Նրանք փորձում էին այս կերպ արդարացնել սոււմգայիթյան իրադարձությունների շուրջ թղթակիցների լռությունը և առաջարկում հակամարտության հետագա ծավալումից խուսափելու նպատակով առաջնորդվել ոչ թե տեղական շահերով, այլ հաշվի առնել «տվյալ պահին առկա պատմական ռեալությունները և երկրում հեղափոխական նորացման գործընթացի ծավալման պայմանները»² :

Խորհրդային լրագրողների նման դիրքորոշումը ոչնչով չէր արդարացվում, քանի որ ճշմարտությունը որքան էլ ծանր լինի, ստիպում է փնտրել ու գտնել պատահարի արմատները, արթնացնում է խիղճն ու դարմանում: Մինչդեռ լռությունն այս պարագայում ամենամեծ անտարբերությունն ու հանցագործությունն էր:

Ամփոփելով անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ 1988 թ. ապրիլ ամիսը կարծես հուսադրող էր և ողջունելի, քանի որ խորհրդային մամուլն առավել մեծ ուշադրություն բեռեց ԼՂ հիմնախնդրին և նրա շուրջ ծավալվող իրադարձություններին, սակայն, չնայած հրապարակայնությունը ենթադրում էր թափանցիկություն և բացախսություն ցանկացած հիմնախնդրի շուրջ, խորհրդային մամուլը անկարող գտնվեց անկեղծորեն ու մարդկայնորեն լուսաբանել ողբերգությունը, ցավակցական խոսք հղել զոհերի հիշատակին: Հրապարակումներից և ոչ մեկում կրկին չարձանագրվեց կատարվածի համակողմանի լուսաբանումը, ընդհակառակը, սոււմգայիթյան սահմնկեցուցիչ եղելության գնահատականները ոչ միայն միտումնավոր էին ու խիստ մակերեսային, այլ հաճախ նաև վիրավորական ու տմարդի: Հիշատակելով ողբերգության առանձին, բացառիկ դրվագները՝ հողվածագրերը կարծես համերաշխված մոռացության ու լռության էին մատնում կատարվածին քաղաքական գնահատական տալը, դրա փոխարեն ընթերցողին առաջարկում էին բանավեճեր երկրում ազգամիջյան հարաբերությունների կատարելագործման ուղիների, ազգայինի և ինտերնացիոնալի հարաբերակցության հարցերի շուրջ, ճամարտակում էին խորհրդային պետությունում ազգերի հոգևոր փոխհարստացման համամարդկային էության մասին: Նմանատիպ բովանդակությամբ հողվածների շարքից ցանկանում ենք զատել միայն ՌԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ս.Ղալթախչյանի՝ գիտական անաչառությամբ աչքի ընկնող հողվածը³: Հեղինակը համարձակորեն այն միտքն էր հաստատում, որ ԽՍՀՄ - ում ազգերի վաստակական անհավասարության վերացումը դեռևս չէր նշանակում ազգամիջյան հարաբերությունների մշակույթում հիմնախնդրների իսպառ բացակայություն, որ վերակառուցման լույսի ներքո ոչ միայն դրսևորվում էին ազգային մշակույթների հակասական զարգացման բարդությունները, այլև՝ ազգերի իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների իրավունքների նսեմացման փաստերը: Ս.Ղալթախչյանը առարկայորեն գտնում էր, որ ԼՂԻՄ-ի օրինակով ակնհայտ էր դարձել ազգերի իրավահավասարության նսեմացումը:

1988 թ. մայիսին կենտրոնական մամուլում տպագրվեց հաղորդագրություն այն մասին, որ Սոււմգայիթում սկսվել են փետրվարյան զանգվածային անկարգությունների գործի լուսնները, և դատարանի առջև է կանգնել խառատ թ. իսմայիլովը⁴: Այս հաղորդագրությունն առիթ ծառայեց զանգվածային նոր հանրահավաքների, ուր ժողովուրդն, իր պայքարում չընկրկելով, պահանջեց դատապարտել սոււմգայիթյան ցեղասպանությունը և պատժել բոլոր հանցագործներին:

Հայկական ԽՍՀ ՆԳ մինիստր Ա. Շահինյանի զեկուցագրում նշվում էր, որ մայիսի 17-ին Մատենադարանի մոտ կազմակերպվել էր հանրահավաք՝ ի նշան բողոքի թ. իսմայիլովի գործով Սոււմգայիթում տեղի ունեցած դատավարության և դատավճռի դեմ, ուր մասնակիցներն, իրենց ելույթներում խստորեն դատապարտելով ցեղասպանու-

¹ Տե՛ս «Аргументы и факты», но.16. 1988.

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս «Труд», «Национальное и интернациональное. Размышления о важном», 28.04.1988.

⁴ Տե՛ս «Известия», 11.05.1988:

յունը, պահանջել էին մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ դատավարության լիարժեք ու անկողմնակալ լուսաբանումը¹:

Նշվում էր նաև, որ մայիսի 19-ին սումգայիթյան դատավարության հրապարակայնության պահանջով հանրահավաքներ էին կայացել Աբովյանում, Հրազդանում, Չարենցավանում, ապա՝ Երևանում, ուր կտրուկ բողոք էր արտահայտվել թ. իսմայիլովին 15 տարի ազատազրկելու վճռի դեմ և պահանջվել կիրառել պատժի առավելագույն չափը՝ մահապատիժը : Ի. Մուրադյանը հանդես էր եկել գործադուլ սկսելու կոչով, եթե երեք օրվա ընթացքում ՋԼՄ-ները անկողմնակալ չտեղեկացնեին ԼՂԻՄ-ում, Հայաստանում և Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունների մասին²:

Ա. Շահինյանը նշում էր նաև, որ մայիսի 14-20-ը տեղի ունեցած բազմահազարանոց ցույցերի և հանրահավաքների ընթացքում ժողովուրդը ցուցաբերել էր կազմակերպվածություն, և չէր արձանագրվել հասարակական կարգի և ոչ մի խախտում, իսկ հանցագործությունների մակարդակը նկատելի փոփոխություն չէր կրել³:

Սումգայիթյան դատավարության մասին կենտրոնական մամուլի մայիսյան հաղորդագրությունը առիթ ծառայեց նաև սումգայիթյան իրադարձությունների ուշացած մեկնաբանությունների, որոնք ավելի շատ պարունակում էին հարցադրումներ, քան պատասխաններ: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Յու. Լևադան և տնտեսագիտության դոկտոր Վ. Շեյնիսը քննարկելով վերակառուցման ընթացքի և նրա անշրջելիության գաղափարը, կատարում էին կարևոր հարցադրում՝ ինչպե՞ս լուսաբանվեցին ԼՂ իրադարձությունները մամուլում և առհասարակ: Նրանք իրավամբ արձանագրում էին, որ անգամ վերակառուցման պայմաններում դանդաղ ու դժվար էր ընթանում կոնֆլիկտազերծ հանրույթի մասին առասպելից հրաժարումը, որ չէին մշակվում անհրաժեշտ սոցիալական մեխանիզմներ ու օպտիմալ միջոցներ՝ այդ առասպելից բանականորեն հրաժարվելու և հակամարտություններին լուծում տալու համար: Վ. Շեյնիսը հարց էր բարձրացնում այն մասին, թե դրսևորվեցին արդյոք սոցիալական մեխանիզմների անհրաժեշտ բաղադրիչները՝ հրապարակայնությունը, ժողովրդավարությունն ու կարծիքների ազատ փոխանակումը անդրկովկասյան դեպքերի նախօրեին: Հողվածում մտացածին երրորդ անձի՝ Սկեպտիսի բերանով հեղինակները հայտարարում էին, որ ազգամիջյան հարաբերություններում դրսևորվում էր «լռության ավանդական մեխանիզմը», սկսվում էր «ծայրահեղականների ու անդրօվկիանոսյան սադրիչների փնտրտուքը»⁴: Վ. Շեյնիսը իրավամբ գտնում էր, որ հրապարակայնությունը խլացվել էր այն պահին, երբ առավել քան պետք էր: « Որքան լուրեր էին պտտվում Սումգայիթի զոհերի թվի շուրջ, - գրում էր տնտեսագետը, - մինչդեռ անհրաժեշտ է նշել ոչ միայն զոհերի հստակ թիվը, այլ՝ բոլորին անուն առ անուն»⁵: Վ. Շեյնիսը իր այս գաղափարը հիմնավորում էր այն գիտակցումով, որ «յուրաքանչյուր մարդ արժեք է», մինչդեռ խորհրդային երկրում «սովոր են միլիոններով հաշվարկին»⁶:

Ալ. Վասիլևսկին «Ամպ է լեռներում» հոդվածում գրում էր, որ «ամեն ինչ սկսվեց Ստեփանակերտում... հայկական բնակչության... հանրահավաքներով ,... ավարտվեց Սումգայիթով»: « Եվ դեռ պետք է բացահայտել, թե ինչպես պատահեց, որ միլիցիան և շտապօգնությունը լռության մատնեցին ահազանգերը, որ քաղաքում այդ օրերին բազմաթիվ հեռախոսահամարներ անջատված էին կամ թե՛ ո՞վ է պատասխան տալու «տանը նստեցեք, խուճապի մի մատնվեք» խորհրդի համար այն դեպքում, երբ անհրաժեշտ էր շտապ տարհանել մարդկանց»: Հեղինակն իրավամբ մեղադրում էր օրինապահ մարմիններին հանցագործ անտարբերության ու անգործության, ավելին՝ գազա-

¹ Տե՛ս «Министру внутренних дел СССР генерал – полковнику тов.Власову. О развитии событий в Армянской ССР с 14 по 20 мая с.г. и принятых мерах по охране общественного порядка», стр.2:

² Տե՛ս նույն տեղում, էջ 3:

³ Նույնը, էջ 4:

⁴ Տե՛ս «Советская культура», Где взять второе дыхание. Актуальный диалог с участием третьего, 03.05.1988.

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում:

զած բանդիտներին (ոչ թե խուլիգաններին-Ս.Ս.) խրախուսելու մեջ, որ սպանեցին ու բռնաբարեցին անմեղ ու անպաշտպան մարդկանց, թալանեցին 200 բնակարան ու 50 խանութ, այրեցին 50 ավտոմեքենա... Նա արձանագրում էր ադրբեջանական իշխանությունների և հանրապետական ԶԼՄ-ների անտարբերությունը, որոնք չասացին ցավակցական և ոչ մի խոսք ¹:

Լրագրող Ս. Դարդիկինի հոդվածով կենտրոնական մամուլն Արցախյան հիմնախնդրի շուրջ ծավալված ազգային-ազատագրական պայքարի ճնշմամբ ստիպված եղավ խոստովանել, որ «պետք է ընդունել կսկծալին, վայրին ու անըմբռնելին. Մարդկանց սպանում, ֆիզիկապես ու բարոյապես հաշմանդամ էին դարձնում միայն այն բանի համար, որ այլազգի էին, այն իրադարձությունների պատճառով, որոնք ծավալվում էին հարյուրավոր կիլոմետրեր հեռու, և որոնց հետ այդ զոհերը ոչ մի ամենչություն չունեին»²: Իսկ ադրբեջանական մամուլում մայիսին արձանագրվեց միայն այն փաստը, որ Սոււմգայիթի քաղկոմի կողմից դատապարտվել է խողովակաձուլման գործարանում ձողերի, դանակների, կացինների և այլ իրերի պատրաստումը, «որոնք կարող էին օգտագործվել խուլիգանական տարրերի կողմից» ³:

Լրագրող Վ. Լոշակի «Սոււմգայիթ: Ողբերգության վերջաբան» հոդվածը ոճագործներից մեկի՝ 20-ամյա թ. իսմայիլովի գործով դատական նիստից ռեպորտաժ էր, ուր ներկայացվում էին 62-ամյա հյուսն Շ. Սարգսյանի հանդեպ իրագործված առանձնակի դաժանությամբ սպանության սահմելեցուցիչ հանգամանքները. «...մոլեգնած ամբոխի կողմից նա դուրս է շարտվել իր մեքենայից Սոււմգայիթի Խաղաղության փողոցում, դաժանորեն ծեծվել է..., ... թ. իսմայիլովը ծեծված, ասֆալտի վրա նետված Սարգսյանի գլխին երկու սարսափելի հարված է հասցրել մետաղաձողով» ⁴: Հոդվածագիրը կատարում էր հարցադրում. ինչու ⁵ է թալեն այդ երեկո գնացել հայեր սպանելու, երբ նրա հոգում ոչ մի չարություն և վիրավորանք չի եղել աշխարհի ոչ մի կոնկրետ հայի նկատմամբ⁵:

Նկատենք, որ բարոյականության իմաստով Վ. Լոշակը մյուս հեղինակների նման խուսափում էր ոճի մյուս սահմելեցուցիչ մանրամասները ներկայացնելուց, բայց նրա դիտարկումները կարևոր էին դառնում այն իմաստով, որ սոււմգայիթյան հրեշավոր ոճրագործ-ամբոխին կոչում էր ոչ թե խուլիգանական տարր, այլ՝ հանցագործ:

Ամփոփելով արձանագրենք, որ ողջ մայիս ամսվա ընթացքում ևս խորհրդային կենտրոնական մամուլը միտումնավոր, հերթական անգամ ձեռնպահ մնաց սոււմգայիթյան զանգվածային ահաբեկչությունը ցեղասպանություն որակելուց, որովհետև նման զնահատականի դեպքում ստիպված կլինեի պատասխան տալ այն հարցին, թե ինչպե՞ս կարող է հայ բնակչությունը ապրել Ադրբեջանի տարածքում, երբ գոյություն ունի նրա ֆիզիկական ոչնչացման սպառնալիքը: Այս անգամ ևս սոււմգայիթյան ողբերգությունը խորհրդային մամուլում ողջ ծավալով չարտացոլվեց ու չդատապարտվեց, ընթերցողը համակողմանիորեն չիրազեկվեց արյունոտ իրողության մասին: Հրապարակումներում հնչող հարցադրումներն առարկայական պատասխաններ չստացան, զանգվածային կազմակերպված հանցագործության կազմակերպիչներն ու պարագլուխներն անհայտ մնացին: Փոխարեն լրագրողական հետաքննության, հրեշավոր ճշմարտության բարձրաձայնման ու հրապարակային դատապարտման՝ խորհրդային կենտրոնական մամուլը ընթերցողին մատուցեց *կիսաձշմարտություն - կիսատուտր*: Ավելին՝ չուշացավ զավեշտը, որ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի նորընտիր քարտուղար Ս. Վեզիրովը, որդեգրելով իր նախորդների հայահալած քաղաքականությունը, մամուլում հայտարարեց, թե Սոււմգայիթի պատճառը հայերի պահանջատիրությունն է: Սոււմգայիթի ոճրագործները հռչակվեցին հերոսներ, իսկ իրական անմեղ զոհերը՝ խուլիգաններին հրահրողներ: Առավել զարմանալի ու զագրելի, անբարոյական եղավ այն փաստը, որ ԽՍՀՄ

¹ Տե՛ս А. Василевский, Туча в горах, «Аврора», но.10, 1988, стр. 8-18.

² Տե՛ս «Известия», 14.05.1988:

³ Տե՛ս «Коммунист Сумгаита», 10.05.1988. Տե՛ս նաև Томас де Ваал, Черный сад, М., 2014, стр. 65.

⁴ Տե՛ս «Московские новости», 22.05.1988, но. 22:

⁵ Տե՛ս նույն տեղում:

լուսավորության մինիստրության համամիութենական մրցության 1987 թ. արդյունքների ամփոփագրում Սումգայիթը ճանաչվեց սոցիալիստական մրցության հաղթող և երիտասարդների ու անչափահասների գաղափարաքաղաքական ու բարոյական դաստիարակության համար արժանացավ փոխանցիկ կարմիր դրոշի, ինչը բացարձակ գիտակցված արհամարհանք էր Արցախյան շարժման, սումգայիթյան եղեռնագործության զոհերի և, ընդհանրապես, հանրային կարծիքի հանդեպ¹ :

1988 թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթում սանձազերծվեց հայության սպանող, որը ցնցեց քաղաքակիրթ հանրությանը:

Հեղինակը քննության է առնում խորհրդային կենտրոնական մամուլի՝ սումգայիթյան իրողություններին վերաբերող հրապարակումները: Խորհրդային կենտրոնական մամուլը ի սկզբանե ապակողմնորոշեց ընթերցողին՝ խեղաթյուրելով փաստերը և չտալով սումգայիթյան ողբերգության իրավաքաղաքական ու բարոյական գնահատականը, չորակելով այն որպես ցեղասպանություն: 1988 թ. ապրիլ - մայիս ամիսներին խորհրդային մամուլը չապահովեց բազմակարծություն և հանրույթի ու տեղեկատվության իրական կապ՝ չլուսաբանելով սումգայիթյան ողբերգության արմատները և պատճառահետևանքային կապերը:

Сусанна Серобян, Сумгаитская трагедия в советской периодической печати за месяцы апрель - май 1988 г. С 27-29 февраля 1988 года в многонациональном Сумгаите, находящемся в двадцати пяти километрах от Баку, произошла резня армянского населения, которая потрясла цивилизованное общество.

Автор рассматривает те публикации советской периодической печати, которые касались сумгаитских событий.

Советская официальная пресса изначально дезориентировала читателя, искажая факты и не давая юридическую, политическую и моральную оценку сумгаитскому геноциду.

Советская периодическая печать за месяцы апрель - май 1988 года не смогла обеспечить плюрализм мнений и прямую связь между читателем и информацией. В прессе не были освещены как причины, так и последствия сумгаитской трагедии.

Ключевые слова: Арцах, проблема, справедливость, Сумгаит, геноцид, пресса, подлог, фальсификация, дезориентация, борьба.

Susanna Serobyan, Sumgait tragedy in the Soviet periodical press in April - May 1988. From February 27-29, 1988 in multinational Sumgait, located in 25 kilometers from Baku, took place a massacre of the Armenian population, which shocked the civilized society. The author considers those publications of the Soviet press that referred to the Sumgait events. Central Press disoriented the reader, distorting the facts and not giving legal, political and moral assessment of Sumgait genocide. Soviet press did not ensure diversity of opinions and a direct connection between the reader and information, not covering both causes and consequences of the Sumgait tragedy.

Key words: Artsakh, problem, justice, Sumgait, genocide, press, forgery, falsification, misleading, struggle.

¹ Տե՛ս «Народное образование», но.5,1988: